Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 18-ի N 270 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների օրինական շրջանառությանը ներկայացվող պահանջները։ Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառություն է համարվում դրանց մշակումը, արտադրությունը, պատրաստումը, վերամշակումը, տեղափոխումը, պահումը, բացթողումը, իրացումը, բաշխումը, ձեռքբերումը, օգտագործումը, առաքումը, արտահանումը, ներմուծումը և ոչնչացումը։

2. Սույն կանոնները տարածվում են Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հետ կապված համապատասխան գործունեության տեսակի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց վրա, բացառությամբ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի արտադրության, պատրաստման, վերամշակման, ինչպես նաև թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրության, պատրաստման, վերամշակման, իրացման, օգտագործման (այդ թվում՝ բժշկական) նպատակով ձեռքբերման հետ կապված հարաբերությունների, որոնց դեպքում սույն կանոնների դրույթները տարածվում են նաև անհատ ձեռնարկատերերի վրա։

3. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների մշակման, արտադրության, պատրաստման համար անհրաժեշտ են՝

1) ասիստենտական սենյակ.

2) փաթեթավորման սենյակ՝ լվացարանով.

3) ամանեղենի մանրէազերծման սենյակ.

4) պահեստ.

5) շշերի պահպանման սենյակ.

6) դեղափոշիների պահպանման սենյակ.

7) տնտեսական ապրանքների պահպանման սենյակ.

8) սանհանգույց՝ լվացարանով։

4. Հոգեմետ նյութերի պատրաստման համար նախատեսված պահեստի պատուհաններն ունեն վանդակաճաղեր, դուռը մետաղյա է կամ թիթեղապատված։ Պահեստն ունի մետաղյա պահարաններ և խոնավաչափ հոգեմետ նյութերը պահելու համար։

5. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների պատրաստման համար դեղերը պահվում են ըստ դեղաբանական խմբերի՝ դրանք ուղեկցող փաստաթղթերում սահմանված ջերմային ռեժիմում և համապատասխան լուսավորության ու խոնավության պայմաններում։

6. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների պատրաստի արտադրանքի հաշվառումն իրականացվում է կարված, էջակալված և կնքված հաշվառման գրքում, որտեղ լիարժեք արտացոլվում է ամենօրյա պատրաստի արտադրանքի շարժը։

7. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների արտադրությունը համապատասխանում է պատշաճ արտադրական գործունեության պահանջներին։

8. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների տեղափոխումը ներմուծման ժամանակ (անցակետից մինչև պահեստ) իրականացվում է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների տեղափոխման համար համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում։

9. Տեղափոխումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ծառայության զինված կարգախմբի ուղեկցությամբ (մարդկանց թիվը և տեղափոխման եղանակը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը) կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Ինկասացիոն կազմակերպություններին, նրանց կողմից օգտագործվող ավտոտրանսպորտային, տեխնիկական անվտանգության և այլ միջոցներին ներկայացվող պարտադիր պահանջները սահմանելու մասին» N 1498-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխան՝ զրահապատ ինկասացիոն ավտոմեքենաների միջոցով:

10. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների տեղափոխման համար պատասխանատու իրավաբանական անձն ապահովում է դրանց պահպանումը:

11. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների տեղափոխման համար յուրաքանչյուր դեպքում կազմակերպության ղեկավարի կողմից կազմվում է հրաման, որով կազմակերպության աշխատողներից նշանակվում է պատասխանատու անձ՝ ստացման, առաքման, փոխանցման և պահպանման համար: Հրամանում նշվում է հրամանի կազմման օրը, ամիսը, տարեթիվը և համարը:

12. Տեղափոխվող թմրամիջոցները, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը և դրանց պրեկուրսորները լինում են փաթեթավորված և կնքված: Դրանց վրա նշվում են ուղարկող և ստացող կազմակերպությունների գտնվելու վայրերը:

13. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների տեղափոխման ժամանակ տեղափոխման համար պատասխանատու անձն իր հետ ունենում է հետևյալ փաստաթղթերը՝

1) ապրանքափոխադրման ամփոփագիրը.

2) հաշիվ-ապրանքագրերը.

3) պայմանագրեր կամ այլ փաստաթղթեր, որտեղ արտացոլվում են փոխադրվող ապրանքների անվանումները և քանակները.

4) տեղափոխվող ապրանքների երթուղին։

14. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների տեղափոխումն իրականացվում է կազմակերպությունների, երկաթուղային, ջրային, ավիացիոն, ավտոմոբիլային տրանսպորտային ճանապարհներով։

15. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների պահպանման համար իրավաբանական անձինք ունեն թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների պահպանման լիցենզիա և պահեստ։ Պահեստի դուռը երկաթյա է, պատուհանները՝ վանդակաճաղերով, պահեստում տեղադրված են հատակին ամրացված չհրկիզվող երկաթյա պահարաններ։ Պահեստները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների հետ հաղորդակից ահազանգման և ազդանշանային համակարգով ու խոնավաչափով։ Պահեստի բանալիները պահվում են պահպանման համար պատասխանատու անձի մոտ։

16. Այն իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են դեղատնային գործունեություն կամ բժշկական օգնություն և սպասարկում, հոգեմետ նյութերի պահպանման համար ունեն երկաթյա պահարան, որը տեղակայված է հատուկ դրա պահպանման համար նախատեսված վանդակաճաղերով պատուհաններով և երկաթյա դուռ ունեցող սենյակում, որն ապահովված է ձայնային ահազանգման համակարգով։

17. Թմրամիջոցների և հոգեմետ նյութերը պահպանվում են դեղաբանական խմբերին և ջերմային ռեժիմին համապատասխան։

18. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը և դրանց պրեկուրսորները բժշկական նպատակներով օգտագործման համար բաշխվում, բաց են թողնվում և

իրացվում են բուժհաստատությունների, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն-ների և դեղատների միջոցով։

19. Թմրամիջոցները և հոգեմետ նյութերը դեղատներից բաց են թողնվում դեղա-տոմսերով։ Թմրադեղերը դեղատներից բաց են թողնվում հիվանդին կամ նրա լիազորած անձին՝ անձնագրի առկայության դեպքում։ Լիազորագիրը տրվում է 2 օրինակից, հաստատ-վում ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության ղեկավարի կողմից։ Լիազորագրի մեկ օրինակը փակցվում է հիվանդի ամբուլատոր քարտին, իսկ մյուս օրինակը մնում է դեղատանը։ Հոգեմետ նյութերի դեղատոմսերի դարձերեսի վրա դեղատան աշխատողի կողմից պարտադիր լրացվում են բաց թողնման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, ստացվող դեղի(դեղերի) փաստացի քանակը (տառերով), ստացողի անձնագրի տվյալները և ստացողի ստորագրությունը։ Բուժհաստատություններում թմրադեղերը դուրս են գրվում, հիմք ընդունելով բժշկի կողմից հիվանդի պատմության քարտում համապատասխան նշանակ-ման և բաժանմունքի ավագ բուժքրոջ կողմից դուրս գրված պահանջագրերը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով։

20. Թմրամիջոցները և հոգեմետ նյութերը բաշխվում են համապատասխան լիցենզիա ունեցող դեղատներից և բժշկական հաստատությունների ներհիվանդանոցային դեղատներից։

21. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսոր-ների օգտագործմամբ փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ է հետևյալ տեխնիկատեխնոլոգիական հագեցվածությունը՝ չորսխցիկավոր էլեկտրական ցենտրի-ֆուգ, էլեկտրական թափահարիչ, գազահեղուկային քրոմատոգրաֆ, մարդու կենսա-հեղուկներում թմրամիջոցների իմունաքիմիական որոշման սարք, թմրամիջոցների շտապ անալիզի թեստեր, քրոմատոմասսպեկտրոմետր, չորացնող պահարան, սառնարան, ջրի թորման սարք, բժշկական պահարան, դեղորայքի պահարան, սեղաններ՝ փորձագետների համար, աթոռներ։

22. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների օգտագործմամբ փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ են հետևյալ տարածքները՝ փորձաքննությունների անցկացման լաբորատորիա, նյութագիտական սենյակ, սենյակ՝ գազահեղուկային քրոմատոգրաֆի համար, պահեստ, ախտահանման սենյակ, գրասենյակ (հանգստի սենյակ), սանհանգույց։

23. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների գիտական և ուսումնական նպատակներով օգտագործման համար իրավաբանական անձինք ունեն թմրամիջոցների և հոգեմետ նյութերի գիտական և ուսումնական նպատակով օգտագործելու համար անհրաժեշտ լաբորատորիաներ, ուսումնական և գիտական փորձերի համար անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով հագեցված կաբինետներ, պահեստ։ Պահեստի դուռը երկաթյա է, պատուհանները՝ վանդակաճաղերով, որոնք ապահովված են ահազանգման և ազդանշանային համակարգով։ Պահեստում տեղադրված են չհրկիզվող պահարաններ և խոնավաչափ։ Պահեստի բանալիները պահվում են պահպանման համար պատասխանատու անձի մոտ։

24. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ցուցակներում ներառված պատրաստուկների ստացման նպատակով վերամշակման համար անհրաժեշտ է դեղանյութերի, վերամշակված պատրաստուկների, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի առանձին պահեստ։ Պահեստի դուռը մետաղյա է, պատուհանները՝ վանդակապատված։ Պահեստն ապահովված է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժիններին հաղորդակից ահազանգման և ազդանշանային համակարգով։ Պահեստում պետք է տեղադրված լինեն չհրկիզվող պահարաններ և խոնավաչափ։ Պահեստի բանալիները պետք է պահվեն պահպանման համար պատասխանատու անձի մոտ։

25. Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող թմրադեղեր և հոգեմետ դեղեր։

26. Հայաստանի Հանրապետության սահմանը հատող քաղաքացիները մաքսային անցակետում լրացնում են իրենց մոտ առկա, բժշկի կողմից նշանակված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի քանակի և ձեռքբերման օրինականության վերաբերյալ հայտարարագիր:

27. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հետ կապված գործունեության լիցենզավորված անձինք Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 270-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված հաշվետվությունները: Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն են ներկայացվում յուրաքանչյուր եռամսյակից հետո 10-օրյա ժամկետում:

28. Եթե ներկայացված հաշվետվությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 270-Ն որոշման N 3 հավելվածով սահմանված ձևին, ապա համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հետ կապված գործունեության լիցենզավորված անձանց առաջարկվում է 3-օրյա ժամկետում շտկել թերությունները և հաշվետվությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 270-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

29. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ոչնչացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և

դրանց պրեկուրսորների տնօրինող և դրանց ոչնչացումը կազմակերպող իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ոչնչացման վերաբերյալ համապատասխան ակտ կազմելու միջոցով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թ.
մարտի 18-ի N 270 -Ն որոշման

Ձ Ե Վ Ա Թ ՈՒ Ղ Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ՄԱՔՍԱՏՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԱՀԵՍՏ) ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՐԹՈՒՂՈՒ

Հաստատում եմ

(ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

(թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, պրեկուրսորներ տեղափոխող իրավաբանական անձի անվանումը, գրանցման վայրը, հասցեն)

--------- ---------- 20 թ.

(ստորագրությունը)

Ե Ր Թ ՈՒ Ղ Ի
ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ

Ուղարկող իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը	
Ստացող իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը	
Ստացման գտնվելու վայրը	
Տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտի և տրանսպորտային միջոցների տեսակները	
Տրանսպորտային միջոցների հիմնական ուղղությունները (բնակեցված վայրերը և փողոցները) տեղափոխման ժամանակ	
Նախատեսվող կանգառների վայրերը	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2010 թ.
մարտի 18-ի N 270 -Ն որոշման

Ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ- ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

NN ը/կ	Թմրամիջոցների և (կամ) հոգեմետ (հոգեներ-գործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների անվանումները	Չափը և չափ-ման միավորը (հաբ, սրվակ, գրամ)	Մնացորդը եռամսյակի սկզբում	Մուտքը	Ծախսը	Մնացորդը եռամսյակի վերջում
1.						
2.						
3.						
4.						
5.						

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

(տնօրենի ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը,)

------ ---------- 20 թ.

Կ. Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_0270